



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

2017թ. դեկտեմբերի 28

N 229-Ա

ԱՊԱՐԱՆԻ ԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՏԵՂԱՄԱՍՈՒՄ 2002 ԹՎԱԿԱՆԻՆ ԾՆՎԱԾ ՊԱՏԱՆԻՆԵՐԻ ԿՑԱԳՐՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով “Զինապարտության մասին” Հայաստանին Հանրապետության օրենքի 5-րդ և 7-րդ հոդվածների պահանջները Ապարանի զորակոչային տեղամասում 2002 թվականին ծնված պատանիների կցագրումն անցկացնելու նպատակով՝ **կարգադրում եմ.**

1. Կցագրման ենթակա պատանիների բժշկական զննումն անցկացնելու համար ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:

2. 2018 թվականի հունվարից Ապարանի զինկոմիսարիատում անցկացնել 2002 թվականին ծնված պատանիների կցագրումը (անհրաժեշտության դեպքում նաև արտագնա).

1) տարածքի բնակավայրերում բնակվող 2002 թվականին ծնված պատանիներին ամբողջությամբ ընդգրկել <<Ձև 2>> ցուցակներում և մանրակրկիտ ստուգելուց հետո կազմել կցագրման ենթակա 2002 թվականին ծնված պատանիների <<Ձև 3>> ամփոփացուցակը,

2) կցագրման ժամանակ հայտնաբերված հիվանդ պատանիների ցուցակը ներկայացնել <<Ապարանի բժշկական կենտրոն>> ՓԲԸ գործադիր տնօրենին նրանց հետագա բուժումը կազմակերպելու համար:

3. <<Ապարանի բժշկական կենտրոն>> ՓԲԸ գործադիր տնօրենին՝

1) բժշկական հանձնաժողովին ապահովել անհրաժեշտ բժշկական պարագաներով և դեղամիջոցներով,

2) նախապատրաստել և ժամանակին զինկոմիսարիատ ներկայացնել 2002 թվականին ծնված պատանիների <<Ձև 25>> ամբուլատոր քարտերը՝ ներդիր թերթիկների հետ,

3) արդյունավետ կազմակերպել կցագրման ժամանակ հայտնաբերված հիվանդ պատանիների բուժումը և արդյունքների մասին տեղեկացնել հանձնաժողովի նախագահին:

4. Առաջարկել Ապարանի և Արագածի տարածաշրջանների համայնքների ղեկավարներին, ուսումնական հաստատությունների տնօրեններին՝

1) Ապարանի տարածքային զինկոմիսարիատ ներկայացնել 2002 թվականին ծնված պատանիներից պահանջվող անհրաժեշտ փաստաթղթերը, ինչպես նաև ապահովել կցագրումից դուրս մնացած պատանիների ներկայանալը,

2) ձեռնարկել անհրաժեշտ աջակցություն, որպեսզի զինակոչիկները ժամանակին ներկայանան զինկոմիսարիատ, անհրաժեշտության դեպքում տրամադրել փոխադրամիջոց:

5. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետին՝

1) դիսպանսեր հսկողության տակ գտնվող 2002 թվականին ծնված պատանիների ամբուլատոր քարտերը և ցուցակները ներկայացնել Ապարանի զինկոմիսարիատ:

6. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության սոցիալական ապահովության բաժնի պետին՝


1) Ապարանի տարածքային զինկոմիսարիատ ներկայացնել Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության աշխատակազմի Ապարանի սոցիալական ապահովության տարածքային բաժնի կողմից հաշվառված 2002 թվականին ծնված հաշմանդամ պատանիների ցուցակները:

7. Հայաստանի Հանրապետության ոստիկանության Արագածոտնի մարզային վարչության Ապարանի բաժնի պետին՝

1) տարածքային զինկոմիսարիատ ներկայացնել Հայաստանի Հանրապետության ոստիկանության Ապարանի բաժնի կողմից քրեական պատասխանատվությամբ նախաքննության մեջ գտնվող պատանիների ցուցակները,

2) խիստ հսկողություն սահմանել Հայաստանի Հանրապետության ոստիկանության անձնագրերի և վիզաների վարչության Ապարանի անձնագրային բաժնի աշխատանքների նկատմամբ, բացառել զորակոչիկին գրանցելը և գրանցումից հանելը՝ առանց զինվորական հաշվառման կանգնելու և հաշվառումից դուրս գալու:

8. Սույն կարգադրության կատարման հսկողությունը դնել Ապարանի զինվորական կոմիսար՝ փոխգնդապետ Ա.Մխիթարյանի վրա:



Ա.ՄԻՄՈՆՅԱՆ

Կ Ա Ձ Մ Ը

Ապարանի տարածքային զինվորական կցագրման բժշկական հանձնաժողովի

- Ա.ՄԽԻԹԱՐՅԱՆ - Ապարանի տարածքային զինվորական կոմիսար, փոխգնդապետ,
հանձնաժողովի նախագահ
- Ա.ՔՈՉԱՐՅԱՆ - հանձնաժողովի քարտուղար
- Կ.ՄԿՐՏՉՅԱՆ - վիրաբույժ, ավագ բժիշկ
- Բ.ՄԱՆՈՒԿՅԱՆ - թերապևտ
- Կ.ՄԱՅԻԼՅԱՆ - սրտաբան
- Լ.ՀԱԿՈԲՅԱՆ - հոգեբույժ
- Լ.ԱԹՈՅԱՆ - ակնաբույժ
- Ա.ՂԱՐԻԲՅԱՆ - նյարդաբան
- Դ.ՂԱՄԲԱՐՅԱՆ - քիթ-կոկորդ-ականջ
- Մ.ՀԱԽՎԵՐԴՅԱՆ - մաշկավեներոլոգ
- Գ.ԱԼԵՔՍԱՆՅԱՆ - բուժքույր

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ



ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

/Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ